

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/8

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Ջովետի» ՍՊԸ 26.06.2015 թ-ի դիմում-գանգատը:

**«Ջովետի» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

27.03.2015թ.-ին և 04.05.2015թ.-ին «Ջովետի» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնի ՀՏ հաստատմանը ներկայացվել են դիմումներ՝ գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկանքը հաստատելու համար: Նշված դիմումները համապատասխանաբար 01.04.2015 և 14.05.2015 թվականների թիվ 209715 և թիվ 3586/5 գրությունների համաձայն մերժվել են համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշմամբ հաստատված՝ գործատուի վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարմանն ուղղված միջոցները փոխհատուցելու կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի:

Համաձայն վերը նշված կարգի 3-րդ կետի ծախսը փոխհատուցելու նպատակով գործատուն հարկային մարմին է ներկայացնում տեղեկանք համաձայն ձևի՝ կցելով հաշվետու ամսվա ընթացքում վճարված նպաստների նշանակման և վճարման համար հիմք հանդիսացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լուսապատճենները:

Նույն կարգի 5-րդ կետի համաձայն հարկային մարմինը 10 օրացույցային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման համապատասխանությունն օրենքին, հաստատում /կնքում/ է տեղեկանքը և վերադարձնում գործատուին, սույն կարգով սահմանված դեպքում նշելով փոխհատուցման ենթակա ծախսի գումարը, կամ գրավոր մերժում է տեղեկանքը հաստատելը՝ նշելով մերժման պատճառը և գործատուի հետագա գործողությունները:

Այսպես, թեև ընկերության կողմից Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկանքը հատատելու համար ներկայացվել են ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշմամբ հաստատված՝ գործատուի վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարմանն ուղղված միջոցները փոխհատուցելու կարգի 3-րդ կետով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այնուամենայնիվ ստացել է մերժում:

Որպես մերժման հիմք թեև նշվել է վերը նշված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը, այն է՝ տեղեկանքը հաստատելը մերժվում է, եթե փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները թերի են, այնուամենայնիվ չի նշվել, թե որ տեղեկություններն են թերի և որոնք պետք է լինեն գործատուի հետագա գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է իր ներկայացրած դիմում-գանգատի վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում:

**«Ճինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«Ճ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Զովետի» ՍՊԸ կողմից 27.03.2015թ.-ին և 04.05.2015թ.-ին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ հաստատմանն են ներկայացվել դիմումներ՝ գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին տեղեկանքը հաստատելու համար: Սակայն, նշված դիմումները Կենտրոնի ՀՏ համապատասխանաբար 01.04.2015 թ-ի թիվ 209715 և 14.05.2015 թ-ի թիվ 3586/5 գրություններով մերժվել են:

Մերժման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշմամբ հաստատված «Գործատուի՝ վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարմանն ուղղված միջոցները փոխհատուցելու կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները, որի համաձայն տեղեկանքը հաստատելը մերժվում է, եթե փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները թերի են:

Հարկ է նշել, որ Կարգի 3-րդ կետի համաձայն. «Ծախսը փոխհատուցելու նպատակով գործատուն հարկային մարմին է ներկայացնում տեղեկանք՝ համաձայն ձևի՝ կցելով հաշվետու ամսվա ընթացքում վճարված նպաստների նշանակման և վճարման համար հիմք հանդիսացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լուսապատճենները»:

Կարգի 5-րդ կետի համաձայն. «Հարկային մարմինը 10 օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման համապատասխանությունն օրենքին, հաստատում (կնքում) է տեղեկանքը և վերադարձնում գործատուին՝ սույն կարգով սահմանված դեպքում նշելով փոխհատուցման ենթակա ծախսի գումարը, կամ գրավոր մերժում է տեղեկանքը հաստատելը՝ նշելով մերժման պատճառը և գործատուի հետագա գործողությունները»:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ներկայացվել են Կարգի 3-րդ կետով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ Կարգի 5-րդ կետով հարկային մարմնին վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում վերջինիս կողմից չեն կարող պահանջվել ներկայացնել լրացուցիչ այնպիսի փաստաթղթեր, որոնց ներկայացումը Կարգով նախատեսված չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

«Զովետի» ՍՊԸ 26.06.2015 թ-ի դիմում-գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

